

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՃԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱԶՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	031301.00.6 ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	031301.01.6 «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ	ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

ՎԱՆԱԶՈՐ 2022

1. Մասնագիտության թվանիշը և անվանումը	031301.00.6 Հոգեբանություն
2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը	031301.01.6 Հոգեբանություն
3. Շնորհվող որակավորումը	Հոգեբանության բակալավր
4. Կրեդիտների քանակը	240
5. Ուսումնառության լեզուն	հայերեն
6. Ուսուցման ձևը	Առկա
7. Ուսումնառության ժամկետը	2018-2022թթ.
8. Կրթական ծրագրի ընդունելության պահանջները	
«Հոգեբանություն» մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ կրթության վկայական և հաջողությամբ հանձնաժ լինի միասնական քննություններ «Հայոց լեզու» և «Կենսաբանություն» կամ «Օտար լեզու» առարկաներից:	
9. Կրթական ծրագրի նպատակները	
Կրթական ծրագրի նպատակն է՝ ստեղծել պայմաններ՝ շրջանավարտի մոտ անձնային և մասնագիտական որակների ձևավորման համար, որոնք անհրաժեշտ են տարբեր տիպի կրթական հիմնարկություններում հաջողությամբ մասնագիտական հոգեբանամանկավարժական գործունեություն ծավալելու համար:	
10. Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները	
<p>Ա1. Ներկայացնել հոգեբանական գիտաճյուղերի հիմնադրույթները, դասական և ժամանակակից տեսությունները</p> <p>Ա2. Վերարտադրել հոգեբանության մեթոդաբանությունը</p> <p>Ա3. Նկարագրել հոգեկանի օրենքներն, օրինաչափությունները և մեխանիզմները</p> <p>Ա4. Թվարկել հոգեկան ակտիվության մակարդակները, գործընթացների, որակների, վիճակների, հատկությունների տիպաբանությունը և առանձնահատկությունները</p> <p>Ա5. Տարբերակել հոգեկանի և վարքի նորման, շեղումները և պաթոլոգիան</p> <p>Ա6. Նկարագրել հոգեբանական օգնության մակարդակները, բացատրել դրանց կազմակերպման առանձնահատկությունները, թվարկել մեթոդները</p> <p>Ա7. Ներկայացնել հոգեբանի գործունեության էթիկական նորմերը, գործունեության տարբեր ոլորտներում ներկայացվող պահանջները</p> <p>Բ1. Կազմակերպելու հոգեբանական ուսումնասիրություններ և հետազոտություններ, կիրառելու հետազոտության արդյունքների որակական և քանակական մեթոդները, կատարելու մասնագիտական հոգեբանական մեկնաբանություններ</p> <p>Բ2. Կիրառելու տեսական գիտելիքները և հետազոտական հմտությունները մասնագիտական գործունեության սահմաններում և առօրյայում</p> <p>Բ3. Հոգեբանական երևույթների, մադու և հասարակության հիմնախնդիրների</p>	

<p>վերաբերյալ ինֆորմացիայի վերլուծության և ընդհանրացման</p> <p>F4. Մշակելու և կիրառելու զարգացնող և շտկողական աշխատանքների հնարներ և մեթոդներ</p> <p>F5. Մոդելավորելու և իրացնելու գործունեության տարբեր տեսակների հոգեբանական աջակցություն՝ (ուսումնադաստիարակչական, աշխատանքային, սոցիալական)</p> <p>F6. Մասնագիտական գործունեության սահմաններում ինովացիոն գաղափարների իրացում, ոչ սովորական , այլընտրանքային որոշումների ընդունման ընդունակություն</p> <p>Գ1. Պատրաստել գեկուցումներ, ներկայացնել հետազոտության արդյունքները, վարել գիտական բանավեճեր</p> <p>Գ2. Օգտվել տեղեկատվական աղբյուրներից, մշակել և ներկայացնել տեղեկատվությունը</p> <p>Գ3. Ձգտել զարգացնելու ինտելեկտուալ, կոմունիկատիվ և կազմակերպչական հմտությունները</p> <p>Գ4. Ցուցաբերել տղերանտություն և համագործակցելու կարողություն</p> <p>Գ5. Կիրառել օտար լեզվով գրավոր կրթական խոսքի հմտությունները հաղորդակցման ոլորտներում</p> <p>Գ6. Համակարգչային ծրագրերից (Word, Excel, Power Point) օգտվելու կարողություն</p>
<p>11. Կրթական ծրագրի ուսումնական պլանը</p>
<p>Կցվում է</p>
<p>12. Գնահատման ձևերը</p>
<p>ՎԴՅ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:</p> <p>Բակալավրիատի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին:</p> <p>Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում.</p> <ul style="list-style-type: none"> - ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, - ինքնուրույն կատարվող աշխատանքներ, - գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցություն, - նրա կողմից դրսևորած ակտիվությունը, հմտությունները և կարողությունները, - ընթացիկ և ամփոփիչ քննություններ կամ ստուգումներ:
<p>13. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները</p>
<p>«Հոգեբանություն» մասնագիտությամբ բակալավրը բուհին ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝</p> <ul style="list-style-type: none"> ● Հանրակրթական դպրոցներում՝ որպես հոգեբան: ● Մանկատներում, արտադասարանական ուսումնադաստիարակչական կենտրոններում որպես հոգեբան: ● Դաստիարակչական հաստատությունների հոգեբան, աշխատակից: ● Ոստիկանության ուղղիչ դաստիարակչական հիմնարկներում հոգեբան: ● Խնամքի հաստատություններում, ներառական դպրոցներում՝ հոգեբան:

- Շտկողական-գարգացնող հաստատությունների հոգեբան, աշխատակից,
- Գիտահետազոտական և ուսումնական հաստատություններում՝ որպես լաբորանտ:

14. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Համակարգչային լսարաններ, արտագնա լաբորատոր պարապմունքներ

15. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ»